



ԽՈՍՔ

## ՀԻՇԱՏԱԿԻ



### ՍՈՒՐԻԿ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Մահացավ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրենիկ Արտավազդի Սարգսյանը՝ վառ ամհատականություն, ինքնատիպ մարդ ու մտածող, հայրենապաշտ ու հայրենասեր: Նրա մարմինն ի պահ տվեցինք հայրենի ու հարազատ հողին: Խողը հարստացավ, մենք աղքատացանք:

Սուրենիկ Արտավազդի Սարգսյանը ծնվել է 1946 թ. ապրիլի 1-ին Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի նորաբաց փիլիսոփայության բաժինը: Բուհն ավարտելուց հետո՝ 1970–1980 թթ., աշխատել է Հայկական հանրագիտարանի գիտավոր խմբագրությունում, 1980–1987 թթ.: «ՀԱԱ փիլիսոփայության ինստիտուտում, 1987 թվականից՝ ՀՊՏՀ-ում: 2002 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, 2005 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում:

Ս. Սարգսյանն իր աշխատանքով և մարդկային նկարագրով ամենուր վայելել է սեր և հարգանք, գնահատվել որպես գիտնական, անաշար մարդ, սրտակից բարեկամ, անշահախնդիր ընկեր:

Նա հայրենասեր էր կյանքով, գործով, գրչով: Նրա հայագիտական ուսումնասիրությունները ձանաչում են ստացել ոչ միայն մասնագետների, այլև ընթերցող լայն հասարակայնության կողմից: Շատերն են կարողացել նրա գործերը, վկայակոչել՝ սեփական տեսակետները հիմնավորելու համար: Հաճախ ենք գրուցել, նույնիսկ բանավիճել մեր պատմության, մշակույթի, ազգային կյանքի առանձին դրվագների շուրջ, որտեղ ես թերություն եմ տեսել, ազգային պակասություն համարել, Սարգսյանը իմ նշած թերության մեջ առավելություն է գտնել, գրել, հիմնավորել իր տեսակետը, գիտական էթիկայի նորմերը պահպանելով՝ հակադրվել ինձ<sup>1</sup>:

<sup>1</sup> Ս. Սարգսյանի հայագիտությանը վերաբերող հրապարակումների մեջ կարելի է առանձնացնել Ս. Սարգսյան-Կատվայսյան, «Հայագիտության ծևակորման ժամանակի և հիմնախնդիրների հարցի շուրջ», Եր., 2013, նոյմի՝ Հայկական Վերածննդի հարցի շուրջ // Հումանիտար գիտությունների արդի հիմնախնդիրները Հայաստանում: Պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների 2-րդ գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու, Եր., 2005, նոյմի՝ Հայկական էթնոպատմանշակութային համակարգի քաղաքակրթական իդեալի ծևակորման ու արդի հասարակական գործընթացների հարցի շուրջ // «Գլածոր-20» հոդվածների հոբելյանական ժողովածու, Երևանի «Գլածոր» համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և հայցորդների 5-րդ գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու, Եր., 2011, նոյմի՝ Ցեղասպանություն, մշակութային ցեղասպանություն, մշակութային անդրադարձներ // Նոր «Գլածոր» գիտության բավկաներում, Երևանի «Գլածոր» համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների, 6-րդ գիտական նստաշրջանի հոդվածների ժողո-

Որպես գիտնական՝ Սուրբիկ Սարգսյանը տարիներ շարունակ զբաղվել է մարդու հիմնախնդրով: Այս ոլորտում նրա ուսումնասիրությունները փիլիսոփայական մարդաբանության մեջ կարևոր ներդրում են: Բայց նա ուսումնասիրում էր այդ հիմնախնդիրը ոչ թե ընդհանրապես, այլ դրա դրսևորման առանձնահատկությունները XIX դարի հայ իրականության մեջ: Նրա «Մարդու հիմնախնդիրը XIX դարի հայ փիլիսոփայական և հասարակական մտքում» մենագրությունը (2001) կարելի է հաճարել այդ ոլորտին վերաբերող հիմնարար աշխատություններից մեկը (որը դարձավ նրա դոկտորական ատենախոսության հիմքը), և այս բնագավառում որևէ հետազոտող չի կարող հաշվի չարնել գիտնական Սարգսյանի ծևակերպած հիմնախնդիրները և առաջադրած լուծումները:

Պրոֆեսոր Սարգսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում էին նաև Դավիթ Անհաղթի ու Գրիգոր Նարեկացու հայացքների նորովի մեկնարանությունները<sup>2</sup>:

Համառոտ՝ Ս. Սարգսյանի ուսումնամեթոդական և դասախոսական աշխատանքների մասին: Երբ ԽՍՀՄ վերջին տարիներին բուհում ներմուծվեց «Մշակութաբանություն» ուսումնական դասընթացը, առաջին առարկայական ծրագիր պատրաստողներից մեկը Սուրբիկ Սարգսյանն էր: Նա նաև առաջինը գրեց և հրատարակեց «Մշակութաբանություն» ուսումնական ծերնարկը (1997): 2004 թ. հրատարակեց կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված «Մշակութաբանություն» և հայ մշակույթի պատմություն» ծերնարկը: Նրան է պատկանում 2007 թ. փիլիսոփայության ամբիոնի հրատարակած «Մշակութաբանություն» ուսումնական ծերնարկի հայ մշակույթի պատմության բաժինը: Մինչև վերջին պահը աշխատում էր մշակութաբանության լրամշակված, ամբողջական ծերնարկի վրա, որը, ցավոք, չհասցրեց ավարտել:

Որպես դասախոս ամենայն պատասխանատվությամբ էր վերաբերվում իր գործին. Երբեք հանպատրաստից լսարան չէր մտնում, շատ էր ուրախանում, երբ հանդիպում էր պատրաստված, բանիմաց ուսանողների և հակառակը՝ տիրում, երբ տեսնում էր ուսանողների, որոնք բուհում անելիք չունեին:

Սիրով էր աշխատում ուսանողների հետ, նրա շատ ուսանողներ բազմաթիվ մրցանակներ են ստացել ՈՒԳԸ նստաշրջաններում: Ս. Սարգսյանի աշխատանքը բարձր է գնահատվել մեր համալսարանում, իսկ «Գլածոր» համալսարանը պարգևատրել է նրան ոսկե մեդալով:

Վածու, Եր., 2013, **Անյանի՝ Եթոնազգայինի և հայրենիքի բնապաշտական, պատմամշակութային ըմբռնությունները հայոց հոգևոր զարգացումներում** (Հնադար - Նոր ժամանակներ) // Հումանիտար գիտությունների հիմնախնդիրները քաղաքակրթության մարտահրավերների համատեքստում: Գլածորյան քննարկումներ: Երևանի «Գլածոր» համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և հայցորդների 8-րդ գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու, Եր., 2017 և այլն:

<sup>2</sup> Տե՛ս Ս. Սարգսյան-Կատովայան, Հայ փիլիսոփայության ծևակորման որոշ առանձնահատկությունների շուրջ. Դավիթ Անհաղթ // Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 2016, թիվ 1, **Անյանի՝ Նարեկացու աշխարհայացքի շուրջ** // Ժամանակակից քաղաքակրթական գործընթացները և հումանիտար գիտությունների զարգացման հիմնախնդիրները Հայաստանում: Պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների արաջին գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., 2004:

Ս. Սարգսյանը աչքի էր ընկնում նաև գիտական տերմինաշխնությամբ: Նա է շրջանառության մեջ դրել «էթնոպատմամշակութային համակարգ», «հոգևոր գործունեության մշակութային ծևեր» հասկացությունները:

Ս. Սարգսյանը սիրում էր փիլիսոփայության մեջ օգտագործել ոչ փիլիսոփայական, ոչ մասնագիտական բառեզրեր, որն ինձ զարմացնում էր, որովհետև նման երևոյթ դիտվում է սիրողական մակարդակում, այսինքն՝ երբ փիլիսոփայությամբ զբաղվում է ոչ փիլիսոփան: Սա այդ դեպքը չէր: Սարգսյանը փիլիսոփա էր ամբողջ կուբանք: Ըստ այդմ՝ իմ զարմանքը որտեղից է այս նախասիրությունը: Եվ երբ 2001 թ. նվիրեց բանաստեղծությունների առաջին գիրքը, ամեն ինչ, ինչպես ասում են, իր տեղն ընկավ, պարզվեց, որ փիլիսոփա լինելուց բացի Սարգսյանը նաև բանաստեղծ (թեև ինքն իրեն բանաստեղծ չէր համարում): 2005 թ. լույս տեսավ բանաստեղծությունների երկրորդ գիրքը:

Ս. Սարգսյանի հետ մասնակցում էինք << պաշտպանության նախարարության հասարակական խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումներին. գնում էինք զորամասեր, հանդիպում գինվորներին, զրուցում նրանց հետ, հանդես գալիս դասախոսություններով: Այդ ամենի գնահատականը եղավ Պաշտպանության նախարարության պատվոգրով պարզեցվելը:

Ահա այսպիսի բազում հետաքրքրություններ ու նախասիրություններ ունեցող լուսավոր մարդուն, շիտակ ընկերոջը, պատվախնդիր գործընկերոջը, բարոյական սկզբունքներով առաջնորդվող գիտնականին ու դասախոսին, իր հայրենիքը ամենից շատ սիրող հային, հավատարին ամուսնուն, զավակներին նվիրված ծնողին, սիրասուն թունիկներին սիրող պապիկին կորցնեցինք: Կրկնեմ ասած՝ հողը հարստացավ, իսկ մենք աղքատացանք:

Թեև աթեխստ եմ, բայց չեմ հավատում, թե մահը վերջն է, ոչնչացում ընդհանրապես: Մահը մեր մարմնական բնույթին է վերաբերում. մարմինը տալիս ենք հողին, հոգին՝ հիշողությանը: Մարդն ապրում է այնքան, որքան նրան հիշում են, իսկ իրապես մահանում է, երբ վերջին հիշողն է մահանում: Քանի քանիսին գիտենք, որ մարմնապես վաղուց մեզ հետ չեն, մեր կողքին չեն, բայց շարունակում են ապրել սոցիալական հիշողության մեջ, մշակույթում: Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրիկ Արտավագի Սարգսյանը դեռ երկար է ապրելու...

**Արամ Սարգսյան**  
*ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ*